



ԱԳՐՈՂԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
 Հայաստանի ազգային ագրարային համալսարան
 AGRISCIENCE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ

Միջազգային գիտական
պարբերական

ISSN 2579-2822



Կայքէջ՝ anau.am/hy/teghkekagir

ՔՏԴ 631.157:368 (479.25)

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՄՈՂԵԼԻ ԶԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Լ.Ա. Զոչարյան

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
levonkocharyan@outlook.com

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Քանալի բառեր՝
*ապահովագրություն,
գյուղատնտեսություն,
ռիսկեր,
արտադրական ծախս,
բերքատվություն,
եկամտաբերություն*

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Աշխարհի տարբեր երկրներում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրությունն իրականացվում է ըստ տարբեր մոտեցումների, սկզբունքների, վնասների գնահատման եղանակների. հաշվի են առնվում երկրում գյուղատնտեսական ապահովագրության զարգացման աստիճանը, վիճակագրական տվյալների բազմազանությունը, բնակլիմայական առանձնահատկությունները և այլն:

Ներկայումս առաջարկվում է Հայաստանում ներդնել «արտադրական ծախսերի» հիման վրա գործող մոդել, ուստի կարևորվում է այդ մոդելի ընտրության հիմնավորումը:

Նախաբան

Աշխարհի տարբեր երկրներում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրությունն իրականացվում է տարբեր մոտեցումներով, սկզբունքներով, վնասների գնահատման մի շարք եղանակներով: Դրանք հիմնականում պայմանավորված են երկրում գյուղատնտեսական ապահովագրության զարգացման աստիճանով, վիճակագրական տվյալների բազմազանությամբ, բնակլիմայական առանձնահատկություններով և այլն: Առաջարկում ենք Հայաստանում ներդնել արտադրական ծախսերի հիման վրա գործող մոդել և հիմնավորել այդ մոդելի ընտրությունը:

Սույն հոդվածում ներկայացվում են գյուղատնտեսական ապահովագրության՝ արտադրական ծախսերի վրա հիմնված մոդելի դրական և բացասական կողմերն ու կիրառելիությունը Հայաստանում:

Նյութը և մեթոդները

2017-2019 թթ. մշակված «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցություն» ծրագրի համաձայն՝ 2019-2024 թթ. նախատեսվում է Հայաստանում իրականացնել մշակաբույսերի արտադրական ծախսերի վրա հիմնված գյուղատնտեսական ապահովագրության պիլոտային ծրագիր: Արտադրական ծախսերի ապահովագրությունը գյուղացու կատարած ծախսերի վրա հիմնված մուլտիռիսկային ապահովագրության պայմանագիր է, որը հատուցում է հաստատուն և փոփոխական ծախսերը:

Ըստ Հայաստանում ներդրվող գյուղատնտեսական ապահովագրության ծրագրի՝ հաշվարկվում են 1 հա այգու մշակության համար անհրաժեշտ ծախսերը (ոռոգման, աշխատուժի, մշակման, պարարտանյութի և այլն):

թի և այլն), որոնց ավելացվում է 20 % կանխատեսվող շահույթը, այնուհետև սահմանվում են ապահովագրական գումարները՝ յուրաքանչյուր մշակաբույսի համար 4 տարբերակով (MILLIMAN PRICING REPORT, Hail cover for pilot in Armenia, Agricultural Insurance Implementation in Armenia, October 29th 2018, Michael J. McCord, Clémence Tatin-Jaleran, Carl Ashenbrenner): Պատահարից հետո փորձագետը հաշվարկում է այգու վնասը (տոկոսներով) և, ըստ ապահովագրական գումարի, սահմանում հատուցման ենթակա գումարի չափը:

Օրինակ՝ ապահովագրվել է 2 հա խաղողի այգի՝ յուրաքանչյուր հեկտարի համար 1,200,000 դրամ ապահովագրական գումարով: Կարկուտի հետևանքով վնասվել է այգու բերքի 30 %: Հատուցման ենթակա գումարը կկազմի՝ 1,200,000·30 % = 360,000 դրամ, որից կհանվի չհատուցվող գումարը՝ ֆրանշիզան, և մնացորդը կփոխանցվի որպես հատուցում:

Համեմատենք խաղողի բերքատվության իրական չափը և հատուցման ենթակա գումարները: Այսպես՝ Հայաստանում 2018 թ. 1 հա խաղողի այգու միջին բերքատվությունը կազմել է 120 ց կամ 12,000 կգ, սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին խաղողի մթերման միջին գինը եղել է 140 դրամ/կգ, 1 հեկտարի միջին եկամտաբերությունը կազմել է 1,680,000 դրամ (Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը, 2018):

Քանի որ գյուղատնտեսական ապահովագրության ծրագրով 1 հա խաղողի այգու համար առավելագույն ապահովագրական գումարը 1,500,000 դրամ է, իրական եկամտաբերության համեմատությամբ տարբերությունը կկազմի 168,000 դրամ կամ 11 %, որը գյուղատնտեսական ռիսկերից պաշտպանվածության առումով ընդունելի թիվ է: Օրինակ, եթե հաշվի առնենք նաև 10 % չհատուցվող գումարը, ապա կարկուտի հետևանքով 1 հա խաղողի այգու 100 % վնասման դեպքում գյուղացին կստանա իրական կորցրած եկամտի 80 %, եթե ընտրած լինի ապահովագրական գումարի ամենաբարձր՝ 1,500,000 դրամ տարբերակը:

Եթե վերոնշյալ վերլուծությունը կատարենք մարզային մակարդակով, կտեսնենք, որ արտադրական ծախսերի մեթոդը դրական ազդեցություն է ապահովում ցածր բերքատվություն, բացասական ազդեցություն՝ բարձր բերքատվություն ունեցող մարզերում: Արարատի և Արմավիրի մարզերում խաղողի միջին բերքատվությունը 1 հեկտարի հաշվով կազմել է համապատասխանաբար 157,0 և 136,7 ց, իսկ միջին եկամտաբերությունը՝ 2,198,000 և 1,913,800 դրամ: Արդյունքում այս մարզերում կգրանցվի համապատասխանաբար 68 % և 78 %, իսկ 10 % չհատուցվող գումարը հանելիս՝ 58 % և 68 % ապահովագրական պաշտպանվածություն:

Արագածոտնի մարզում 1 հա խաղողի այգու միջին բերքատվությունը կազմում է 51,3 ց, իսկ եկամտա-

բերությունը՝ 718,200 դրամ: Հետևաբար բերքի 100 % ոչնչացման և 1,500,000 դրամ ապահովագրական գումարի տարբերակի դեպքում գյուղացին կստանա գրեթե կրկնակի հատուցում (բերքը մթերողին վաճառելու համեմատ): Մարզերում տիրող իրավիճակը ներկայացնենք աղյուսակի տեսքով:

Աղյուսակ. Մարզերում ապահովագրական ծածկույթի բաշխվածությունն ըստ բերքատվության*

Մարզեր	1 հա միջին բերքատվությունը 2018 թ., ց	1 հա միջին եկամտաբերությունը 2018 թ., դրամ	Ապահովագրական ծածկույթը 1,500,000 դրամ ապ. գումարի դեպքում, %
Երևան	32,3	452,200	331,71
Արագածոտն	51,3	718,200	208,86
Արարատ	157,0	2,198,000	68,24
Արմավիր	136,7	1,913,800	78,38
Գեղարքունիք	0	-	-
Լոռի	21,8	305,200	491,48
Կոտայք	22,6	316,400	474,08
Շիրակ	0	-	-
Սյունիք	26,9	376,600	398,30
Վայոց ձոր	53,8	753,200	199,15
Տավուշ	74,8	1,047,200	143,24
Հայաստանում	120,1	1,681,400	89,21

* Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը, 2018:

Արդյունքները և վերլուծությունը

Կարկուտից ամենախոցելի երկու մարզերում ապահովագրական պաշտպանվածությունը իրական կորուստներից ցածր է, իսկ առավել քիչ խոցելի մարզերում՝ բարձր:

Ըստ վերլուծության՝ ստացվել են հետևյալ արդյունքները.

1. Արտադրական ծախսերի մոդելի դեպքում միջինացված տվյալներով գյուղացիների պաշտպանվածությունը կազմում է 80 %:

2. Խաղողի այգիների բերքատվության և եկամտաբերության խիստ տատանունների հետևանքով առավել խոցելի մարզերն ունենում են ավելի ցածր ծածկույթ, քան ոչ ռիսկային մարզերը:
3. Ցածր բերքատվություն ունեցող մարզերում մեծ է խարդախությունների ռիսկը: Մասնավորապես՝ 450,000 դրամ եկամտաբերություն ունեցող գյուղացուն ձեռնտու է այրել այգին և ստանալ 1,500,000 դրամ հատուցում:
4. Կիսատ ծածկույթի դեպքում Արարատի և Արմավիրի մարզերում ավելի դժվար կլինի «վաճառել» ապահովագրության պայմանագրերը:
5. Չի պահանջվում արտադրական ծախսերը հավաստող ոչ մի փաստաթուղթ, իսկ անհրաժեշտության դեպքում հնարավոր չէ ձեռք բերել: Հայաստանում գյուղացիական տնտեսությունների 97 %-ը պատկանում է գյուղացիներին (ֆիզիկական անձանց), ովքեր չեն ունենում ծախսերը հավաստող որևէ փաստաթուղթ: Հետևաբար լավ խնամված և առանց որևէ խնամքի այգիների համար վճարվելու է միևնույն ապահովագրավճարը:

Եզրակացություն

Վերոնշյալ խնդիրների լուծման նպատակով առաջարկում ենք արտադրության ծախսերի մոդելի վրա հիմնված ապահովագրական գումարների մեխանիզմը փոխարինել շրջանառության վրա հիմնված մոդելով (Revenue Insurance), որը ծածկույթ է տրամադրում ըստ հողամասի շրջանառության տատանումների: Քանի որ շրջանառությունը հաշվարկվում է ըստ գնի և քանակի ապահովագրության, այս տեսակը ծածկույթ է տրամադրում և գնի, և քանակի համար: Այդ առումով սա շրջանառության կայունացման ամենաարդյունավետ ապահովագրությունն է:

ԱՄՆ ռիսկերի կառավարման գործակալությունը մի շարք բերքատեսակների համար տրամադրում է շրջանառության ապահովագրություն: Ամենատարածվածը ցորենի շրջանառության ապահովագրությունն է: Ըստ ծրագրի՝ նախ յուրաքանչյուր հեկտարի հաշվով գնահատվում է ցորենի տարողունակությունը (հիմք է ընդունվում Ֆերմերի սեփական արտադրության պատմությունը), ապա որոշվում է ցորենի ֆյուչերսների գինը, այս երկու գործոնների համակցությամբ կանխատեսվում է սպասվելիք շրջանառությունը, և սահմանվում

հատուցման շեմը. այն հիմնականում կազմում է շրջանառության 80 % (<http://www.aginsurancproject.com>):

Անհրաժեշտ է սահմանել ֆիքսված ապահովագրական գումարների համեմատությամբ «լողացող» ապահովագրական գումարներ: Գործող ծրագրում առաջարկվում է ապահովագրական գումարների չորս տարբերակ՝ 750,000, 1,000,000, 1,250,000 և 1,500,000 դրամ:

Ավելի «արդար» կլինի ապահովագրական գումարը բաշխել ըստ մարզերի, բերքատվության և եկամտաբերության: Մասնավորապես՝ յուրաքանչյուր տարվա գարնանն այդ տարվա ապահովագրական գումարների չափերը սահմանել ըստ նախորդ տարվա խաղողի մթերման միջին գնի և 1 հեկտարի միջին բերքատվության: Արդյունքում 2019 թ. համար կունենանք 300,000-2,200,000 դրամ ապահովագրական գումար:

Քանի որ Հայաստանում խաղողագործությամբ զբաղվող 66518 տնտեսություններից 41011-ը կամ 61 %-ը գտնվում են Արմավիրի և Արարատի մարզերում, ի տարբերություն գործող մոդելի՝ առաջարկվող մոդելով այդ մարզերում կհավաքագրվի ավելի շատ ապահովագրավճար: Արդյունքում նաև կգործի «արդարության» հետևյալ մեխանիզմը՝ որքան շատ եկամուտ, այնքան շատ ապահովագրավճար, և հակառակը:

Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության 2018 թ. պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թ. դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշում:
2. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2018 թ.: Վիճակագրական տեղեկագիր. - Եր., 2018:
3. Consulting Services for the Programme, Agricultural Insurance Implementation in Armenia, January 2019 (KWF Bank research).
4. Michael J., McCord, Clémence, Tatin-Jaleran, Carl Ashenbrenner. MILLIMAN PRICING REPORT, Hail cover for pilot in Armenia, Agricultural Insurance Implementation in Armenia, October 29th 2018.
5. <http://www.aginsurancproject.com>, Agricultural Insurance Types (դիտվել է՝ 01.04.2019 թ.):

АННОТАЦИЯ**Задачи и эффективность модели производственных расходов в страховании сельского хозяйства в Армении**

Страхование сельскохозяйственных рисков в разных странах осуществляется с применением различных подходов, моделей и принципов, базовых показателей оценки убытков. Они, в основном, зависят от уровня развития страны, разнообразия статистических данных, климатических особенностей и т. д. В настоящее время предлагается внедрить в Армении модель производственных затрат, поэтому возникает необходимость найти обоснование эффективности этой модели. В данной статье рассматриваются негативные и позитивные аспекты модели страхования себестоимости продукции, а также продуктивность этой модели для Армении.

ABSTRACT**Issues and Efficiency of Production Expense Model for Agricultural Insurance in Armenia**

Insurance of agricultural risks in different countries is carried out using different approaches, models, principles and basic indicators for assessing losses. They mostly depend on the development level of the country, diversity of statistical data, climatic features, etc. Currently it is recommended to introduce the model of production expenses in Armenia, thus, a necessity appears to find some justifications for the effectiveness of the mentioned model. The article considers negative and positive aspects of insurance model for production cost price and its productiveness in Armenia.

Ընդունվել է՝ 19.04.2019 թ.
Գրախոսվել է՝ 06.06.2019 թ.